

## ԱՐԴԱՅԻՆ-ՀԻՇԽՈՒՐԱԿԱՆ ԱՎՏՈՆՈՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ

### ԱՌԱՋԱՐԱՆ

Հնոր հոսանքը<sup>218</sup> ամսագրի 1913 թվի 1-ին և 2-րդ համարներում լույս տեսան Դ. Անանումի<sup>219</sup> հոդվածները՝ «Ազգային հարցը և գեմոկրատիան» վերնագրով։ Մեր գրքույկը մի պատասխան է այդ հոդվածներին։ Վաղուց է, որ այդ պատասխանը դրված է, բայց սինչ-ինչը պատճառներով մենք միայն այժմ, ազելի քան մի տարի անցած, հեարավորություն ունենք տպագրության հանձնելու ներկա գրքույկը<sup>220</sup>։

Դ. Անանումի հոդվածների մեջ շահափառ հարցը՝ ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին՝ հերթական հետաքրքրություն է ներկայացնում այժմ Ռուսաստանում։ Այդ հարցի բազմակողմանի քննությունը մեծ կարևորություն ունի մասնավորապես հայ դեմոկրատիայի համար։ Մեզանում շկա մի կուսակցություն՝ կոերական թե բուժուական, ժխավարամիութեամիսու, որ կողմնակից լինի ազգային-կուլտուրական ավտոնոմիային։ Թե՛ տերսերական ուշադիրը<sup>221</sup>, թե՛ հայ վաճառականների օրգան ու Մշակը և թե՛ հայ մանրբութուական ու քաղքենիական ինստիլյուտների քերան ուղղիկոնը<sup>222</sup>—ըստորն էլ հայոց ազգի փրկությունը տեսնում էն այդ ավտոնոմիայի մեջ։

Դ. Անանումի հոդվածը մի անհաջող փորձ է՝ հիմնավորելու ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը մարքսական տեսակետից։ Մեր ժամանակներում ի՞նչ ասեք, որ չնե փորձում արդարացնել մարքսիզմով և ո՞վ ասեք, որ իրեն մարքսիստ լի հայտարարում։ Առանձնապես ազեղ ու այլանդակ ձեեր է ընդունել մարքսիզմի շահագործումը ոՄԸ-շակէ-ում աշխատող մի խումբ անսկզբունք գրողների կողմից։ որոնց զլուխ է անցած Բախչի հշամանյան<sup>223</sup> կոչվող մի բախ-

տախնդիր: Բարոյական ամենատարրական սկզբունքներից գուրկ այդ քրեական տիպը հանդես է եկել նորից հայ ընթերցողի առաջ «մարքսիստի» անունով: Այդ պարոնը այնքան է կապված ժամանակակից բանվորության ազատագրական շարժման հետ, — բարոյապես թե իրապես, — որքան Տիրեթի Դալայ-Լաման: Բայց տեսեք, թե ինչպես է նա կուրծք ծեծում «Մշակ»-ի էջերում՝ հավատացնելու միամիտ հայ ընթերցողին, թե նրա բերանով խոսում է ինքը՝ Կարլ Մարքսը:

Որպիսի՞ դառն հեգնանք. ամենամաքուր գործին մոտենում են ամենակեղոտ ձեռքերը: Եվ ցավալին այն է, որ գտնվում են մարդիկ, որոնք հավատում են այդ գրական աֆերիստին և գաղափարական մարդ են համարում նրան: Որքան տիսուր վկայություն է այդ՝ հայ ընթերցող հասարակության և հայկական գրական բարքերի մասին:

Մենք դեռ առիթ կունենանք, երկի, խոսելու թե՛ այդ պարոնի և թե՛ նրան «համբերողաբար» ձեռք մեկնող և նրա հետ միասին «Մշակ»-ում աշխատող մյուս «մարքսիստ» կոչեցյալների մասին: Մենք այստեղ օգտվում ենք միայն առիթից՝ զգուշացնելու տւմ հարկն է, որ հալած յուղի տեղ շընդունեն ամեն մի տեղից վեր կացող և իրեն «մարքսիստ» հայտարարող պարոնների աղաղակները: Հարկավոր է անխնա հարվածել ու հալածել մարքսիզմը շահագործող ու ապականող այդ բախչիներին:

Եվ հարկավոր է հարվածել ու հալածել նրանց ոչ միայն նրա համար, որ նրանք շահագործում են ու ապականում այդ մեծ ուսմունքը, այլև հանուն գրական բարքերի մաքրության առհասարակ, հանուն Բելինսկու, Զերնիշևսկու մեզ թողած սրբազան գրական ավանդների: Գրականությունը մի տաճար է, ուր կարելի է մտնել միայն մաքուր խղճով և աղնիվ միտումներով: Իսկ երբ մարդիկ մոտենում են այդ տաճարին մանր փառասիրական տենչերով, շահադիտական նպատակներով և խարերայական հակումներով, — դա ամենամեծ ոճագործությունն է, որ կատարվում է ժողովրդի դեմ:

Դ. Ա.նին մենք չենք գասում այսեղ բախչիների թվում: Մենք նրա հետ սկզբունքային վեճ ենք մղում՝ ցույց տալու համար, որ նա իր աշխարհայացքով և իր առաջադրած ազ-

գային ծրագրով հեռու է մարքսիզմից, որ նա, ըստ ամենայնի, մի սոսկ նացիոնալիստ է: Դրա հետ միասին, — և այդ ամենից գլխավորն է մեզ համար, որովհետեւ Դ. Ա.-նի գրական-հասարակական դեմքը ինքնըստինքյան հետաքրքրություն չի ներկայացնում, — մենք ուզում ենք ցույց տալ, որ ազգային-կուլտուրական ավտոնոմիան մի վնասակար ու հետադիմական պահանջ է:

Թե որքան հաջողվում է մեզ այդ անել, թողնում ենք դատելու ընթերցողներին:

Այսիս

10 հունիսի 1914 թ.